

ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ  
2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԵՎ  
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՝ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիր պատասխանների ձևաբուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղրում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

**1**

Համարակալված բառերում և բառաձևերում բաց բողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:

1. հասարակա-ային երկիր, 2. եղնիկների խայ-ալը, 3. կարկաչ-ն առվակ, 4. Ա-քամար կղզի, 5. աչքի կո-, 6. ա- ու ահյակ, 7. աշխարհի չորս ծա-երը, 8. Սոֆ- մայրաքաղաք:

- 1) 1-ծ, 2-թ, 4-դ, 6-ջ
- 2) 2-տ, 3-ու, 5-պ, 7-գ
- 3) 1-ծ, 4-դ, 6-չ, 8-իա
- 4) 3-յու, 5-պ, 7-գ, 8-իա

**2**

Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) ի(մի)բերել, ծայրից(ծայր), տեր(Սարգիս), (այսու)հետև
- 2) դեմ(դիմաց), Սանկտ(Պետերբուրգ), երկու(երրորդ), ի(զեն)
- 3) ըստ(իս), սրբություն(սրբոց), կուժ(կոտրուկ), դրու(դրան)
- 4) (առ)այն, ձեռք(բերել), նոր(խարբերդցի), ինչ(որ)է

**3**

Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԵՐԻԿԱ, ԹԱԿԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆԻ ՍԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՍՈՎՅՈՍՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ
- 2) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ ՏԱՄՆՎԵՅԵՐՈՐԴ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱԲՀ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ
- 3) ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ԺԱՆ ԲԱՏԻՍ ՄՈԼԻԵՐ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ
- 4) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՀԱՍ, ԲԱՐԵՀՈՒՏՈ ՀՐՎԱՆԴԱՆ, ՈՒՂԱՐԴ ԱՌՅՈՒՑԱՍԻՐՏ, ՈՒՒՍԱՍԱՍԻ ԴԱԾՆՈՒԹՅՈՒՆ

**4**

Ո՞ր շարքի բոլոր բառերում երկինչյունի հնչյունափոխություն կա:

- 1) մեհենական, կղզեխումբ, հուզախառն, բնավեր
- 2) ատենակալ, աշխուժորեն, հեծելազոր, ալրաքարախ
- 3) խուզարկու, վարագուրել, քրիստոնեական, ալեծուփ
- 4) բուլակազմ, կենսախինդ, գուշակություն, միութենական

**5**

Ո՞ր շարքի բոլոր բառերում թ-ի սղում կա:

- 1) փխրուն, մանրավաճառ, ակնհայտ, ծնրադիր
- 2) բարձրաձայն, եզրային, աստղազարդ, դստրիկ
- 3) ցածրահասակ, ծանրաձող, սանդղահարթակ, երփներանգ
- 4) մեղրածոր, կարծրանալ, սանրել, կակդամորք

**6**

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) վարանում, տարակույս, երկբայություն, մեղադրանք
- 2) աջակցել, նպաստել, սատարել, ձոնել
- 3) մեծանուն, հանրաճանաչ, հռչակավոր, երևելի
- 4) սնամեջ, փուչ, ունայն, ընչազուրկ

7

Ո՞ր շարքի բոլոր գույգերն են կազմված հականիշներից:

- 1) իրազեկ—անտեղյակ, քամահրանք—քամբասանք, բացասում—հաստատում
- 2) զարդարուն—անպաճույժ, անթաքույց—սքողված, կայտառ—շենշող
- 3) շաղակրատ—քչախոս, գժտվել—հաշտվել, տարտամ—որոշակի
- 4) խաղաղ—փոքրկուն, անդորր—սաստիկ, լայնարձակ—անձուկ

8

Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) **մի սանրի կտավ**—նույն բացասական հատկություններն ունեցող
- 2) **զլսի տակ փափուկ բարձ դնել**—սնոտի խոստումներով խարել
- 3) **ուրբարը շուտ զայ, քան շարարը**—դժվար իրավիճակում արագ կողմնորոշվել
- 4) **սև սպիտակ դարձնել**—սուտը որպես ճշմարտություն ներկայացնել

9

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ծերունու հետնորդները սրբությամբ պահպանում էին նրա բողած մասունքները:
- 2) Որդին վերջապես տեղի տվեց մոր թախանձագին խնդրանքին:
- 3) «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության վերջին քառյակը մեծ տաղերգուի քանրարի փայլատակումն է:
- 4) Հնագետները պեղելով կավից օրական զատում են մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, մի կոպիտ արծաթադրամ:

10

Ո՞ր տարրերակում է ընդգծված բառը իմաստով տարրերվում մյուս տարրերակներում ընդգծվածներից:

- 1) Կամ ինչպես քաջրերն այրերի մքնից,  
Երբ նայում է մարդ քարափի գլխից  
Կամ թե ուշացած անցնում է ձորով,  
Խարում են, կանչում ծանոթ ձայներով:
- 2) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,  
Ծնվեց նա՝ **Այր** մի՝ Մաշտոց անունով:
- 3) Հաշվեսեղանի հետևում նատած էին սրճարանի տերերը՝ մի **այր** ու մի կին:
- 4) Ուսումնասիրությունն ավարտելուց հետո կցեց մի հիշատակարան, թե ինքն արդեն **այր** է մի հիվանդ, ձեռքն այլևս հաստատ չէ, չի զորում նաև աչքը:

11

Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց գործիական հոլովը կարող է կազմվել **բ-ով**:

1. արյուն, 2. կատարում, 3. մաս, 4. անձ, 5. անուն, 6. իրավունք, 7. զորություն

- 1) 1, 3, 5, 6
- 2) 1, 2, 5, 7
- 3) 2, 3, 4, 7
- 4) 2, 4, 5, 7

12

Ո՞ր շարքում ածական չկա:

- 1) հպարտորեն, թանկարժեք, ոստրե
- 2) հիմնովին, հեռավոր, հեծելազոր
- 3) բազմից, բրոնզաձույլ, խորտիկ
- 4) նույնալիսի, անշուշտ, առանձնապես

**13 Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

- 1) Ծաղրածուի խոսքերը վաթունամյա Լիր արքայի սրտում կասկած են ծնում.  
մի՞թե կրտսեր դուստրն էլ նման է մյուսներին:
- 2) Երեկոյան, երբ երկնքում սավառնում էին թռուցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
- 3) Նրան պատասխանեց զանգակի դողանջը, որ քանի երորդ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից:
- 4) Գետի ջուրը անձրևի յոթերորդ օրը այնքան առատ էր, որ կարող էր սայլերը քշելով տանել:

**14 Ո՞ր տարրերակում դերանվաճ՝ սխալ հոլովածնով գործածություն չկա:**

- 1) Ես քո վրա հույս չեմ դնում:
- 2) Մեզ մոտից մինչև այդ գյուղը ոտքի ճանապարհ է:
- 3) Նա դեռ իր օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
- 4) Մինչև լեռնագագաթը իմ հետ ոչ ոք չբարձրացավ:

**15 Ո՞ր շարքի բոլոր քայերն են առ խոնարհման:**

- 1) եկավ, ասաց, հասկացել եմ
- 2) հուսանք, դարձի՛ր, դողացող
- 3) բարձրացի՛ր, ծիծաղում եմ, վշշում է
- 4) մնացինք, կիավատա, խոսում էր

**16 Ո՞ր նախադասությունն է բարդ ստորադասական:**

- 1) Եթե Աստղիկը զիջող էր ու դյուրահավատ, ապա Գոհարը հիշաչար էր ու համառ:
- 2) Երկրի թագավորը՝ հեղիեղուկ ու փոքրոգի մի մարդ, նախանձում էր քաջ գորապես իհոչակին՝ իրեն զգալով նվաստ ու չնշին:
- 3) Քահանան լրու ու խորհրդավոր ասեղնագործում էր տառերը, օրը՝ մեկ տառ,  
երբեմն նաև պատմություններ էր անում սուրբ Մաշտոցի մասին:
- 4) Միջնադարյան գրիչները գրքի մասին արտահայտվել են այնպես, ինչպես  
կարտահայտվեին կենդանի մարդու մասին:


**17 Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն նախադասությունների համարները, որոնցից երկուսում էլ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրա ահեղագոշ ծայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:
2. Թեև քաղաքն այլևս հրապույր չուներ սակայն ամեն ինչ մի ամբողջ աշխարհ էր դիտողի համար և նավթային արդյունաբերությունը և հանքերը և  
նավագնացությունը:
3. Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:
4. Քաղաքապետ իշխանը հայրատ ու վես ճոխ ու զարդարուն հազուստով այդ մարդը  
գալիս էր դանդաղ քայլերով շրջապատված շքախմբով:

- 1) 1, 2
- 2) 2, 3
- 3) 1, 3
- 4) 2, 4

**18** Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Ով մի քանի օր տեսած չեր լինում Նահասետի աշխատելը, նկատում էր տարրերությունը, ով ամեն օր էր տեսնում, կարծում էր, թե պատճ անշարժ իր տեղում է և բոլորովին չի բարձրանում:



**19** Ո՞ր նախադասության մեջ միջոցի խնդիր կա:

- 1) Սամույրե մեծ օճիբով վերարկուն հագին՝ նա շրջում էր Սյունիքում՝ աղետի դեմն առնելու համար միջոցներ որոնելու:
- 2) Երեկոները մենք հաճախ էինք հավաքվում, կարոտով պատմում մեր անցյալից:
- 3) Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեց Եվ խորհուրդներով դյուրես վերստին սիրտս տարագիր:
- 4) Միջնաբերդ տանող ճանապարհը գնալով դառնում էր դժվարագնաց, իսկ խմբով այցելողների համար՝ ընդհանրապես անանցանելի:

**20** Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Սարդարապատում ողջ հայ ժողովուրդը միասնական պայքարի դուրս եկան:
- 2) Դրսում ցուրտ էր, և զյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէին երևում:
- 3) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել են ժամանակից շուտ:
- 4) Այդ օրը պահարանից անհետացան ամուսնու նվիրած մատանին մի քանի ուրիշ զարդերի հետ:

**21** Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Ըմբռստ մի ծառ՝ առույգ, առողջ ոստերով, անտեսելով արգելքները՝ անվրդով բարձրանում էր վեր՝ դեպի ամառշող լեռները:
- 2) Քանի դեռ լույս էր, և ճանապարհը՝ լայն, գնում էի արագ՝ խուսափելով տարատեսակ վտանգներից և փորձանքներից:
- 3) Աղամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր Լիլիթին՝ աչքերը չհեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող նազերից:
- 4) Թե ում էի պարտական իմ փրկության համար, ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:

**22** Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Տարերային ահեղ ուժերը մեզ կիսեցին, բաժանեցին առժամանակ, .....*

- 1) Հնայած բոհուքոի մեջ էին ժամանակի ու տարածության բոլոր իրերը:
- 2) անցնելով մի վայրկյանի պես:
- 3) որ անպարտելի կարոտով համակված՝ անթիվ դարերից հետո նորից գտնենք իրար:
- 4) բայց միշտ անբաժան ու միացած, անմեկին սիրով, իրարից անհագ:

23

Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Արևմտյան Ասիայի տորթակեզ, անանձրեւ կլիմայի պատճառով ջուրն ուժեղ գոլորշիանում է ծովի մակերևույթից, բայց միայն մարուր ջուրն է գոլորշիանում. լուծված աղերը մնում են ծովում և մեծացնում ջրի աղիությունը:
  2. Հանրահայտ Մեռյալ ծովի ջուրն արտակարգ աղի է, այնքան, որ նրա մեջ չի կարող ապրել ոչ մի կենդանի էակ:
  3. Մեր մարմնի կշիռը նկատելիորեն փոքր է նույն ծավալով խիտ աղի ջրի կշռից, ուստի մարդը Մեռյալ ծովում, ըստ լողալու օրենքի, ջրի երեսն է դուրս գալիս այնպես, ինչպես հավի ձուն է աղի ջրի երեսը դուրս գալիս (իսկ խմելու ջրի մեջ սուզվում է):
  4. Մեռյալ ծովի մեծ աղապարունակությամբ է պայմանավորված նրա այն առանձնահատկությունը, որ այդ ծովի ջուրը նկատելիորեն ծանր է սովորական ծովերի ջրերից. այդ ծանր հեղուկի մեջ հնարավոր չէ սուզվել:
- 1) 1, 3, 2, 4
  - 2) 2, 1, 3, 4
  - 3) 2, 1, 4, 3
  - 4) 1, 3, 4, 2

24

Ո՞ր հատվածը արևմտահայերենով չէ:

- 1) Դեղին վարդեր մայիսի,  
բուրումներով խնկավետ  
բալկության մը մեջ հավետ  
կը տժզունին մեկուսի:
- 2) Ես այգերով ու ցայգերով  
Հաճախ մենակ կ'անրջես  
Անհնարին, երկնագորով  
Մեր մը, որուն տերը չեմ:
- 3) Էրնեկ ես անոր կու տամ,  
որ առեր իր եարն է փախեր.  
Ոնց որ ըզկարմուցն անցեր,  
ջուրն ելեր, զկարմուցն է տարեր:
- 4) Իրիկվան մեջ, զյուղին քով,  
Կը մրմնջե գուռն ուտիին տակ շքեղ:  
Զայն կը լեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,  
Աստղը՝ բյուրեղ արցունքով:

25

«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:

- 1) Փոքր Սիերը լուծում է հոր Վրեժը՝ սպանելով Շմշկիկ Սուլթանին և կոտորելով նրա գորբը:
- 2) Իմանալով Դավիթի մահվան մասին՝ Խանդութը իրեն բերդի գլխից ցած է նետում և մահանում:
- 3) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց գորեն առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:
- 4) Հոր անենքով Փոքր Սիերը մնում է անմահ ու անժառանգ, դևերը բռնում են նրան և փակում Ազուավարում:

**26** Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին քարզմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:

- 1) Դավթի սաղմոսները
- 2) Ժողովողի գիրքը
- 3) Սողոմոնի առակները
- 4) Ծննդոց գիրքը

**27** Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Խմ ցավը» բանաստեղծության մեջ:

- 1) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը
- 2) երիտասարդ տարիքում մեռնելը
- 3) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
- 4) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը

**28** Ա. Քակունցի ո՞ր պատմվածքից է տրված հատվածը:

«Եվ այդ հիմ հավատով էլ վերջանում էին Շարժաղ բիբու կրոնական զգացումները: Եկեղեցի չէր գնում. ոչ աղոքք գիտեր, ոչ ծանոթ էր եկեղեցական ծեսերի: Բայց և այնպես մի խորհրդավոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյան երգում էին զանգերը, երգում էր և հիմ դուռը»:

- 1) «Սպիտակ ձին»
- 2) «Ալպիական մանուշակ»
- 3) «Սիրիավ»
- 4) «Խոնարի աղջիկը»

**29** Ո՞րը Հ. Թումանյանի քառյակի առաջին տող չէ:

- 1) Խոր սուզվեցին ակն աղբյուրի...
- 2) Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես...
- 3) Լինե՞ր հեռու մի անկյուն...
- 4) Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի...

**30** Տրված հատվածներից ո՞րն է Ա. Իսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմից:

- 1) Ե՛վ անապատում, և հավերժական Անուրջում հոգիս կլսե, կզգա Նողանջը զանգի տիեզերական Եվ մեղմ կզգին տատասկին դժնյա:
- 2) Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, շքեղ գինդերով, Ծիածանաթև հավերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով:
- 3) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛րշ տուր Օտար, ամայի ճամփեքի վրա. Ուրսեղ կիոզմիս՝ գլուխս վար դիր Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
- 4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կոհվ, ո՛չ կին Զեն հափշտակում հիվանդ իմ հոգին: Նողանջն է միայն ճիգ քարավանի Հեռավոր, անհայտ ճանապարհների Հրապույրներով ոյութում իմ հոգին Թափառումների տենչով անմեկին:

**31**

**Գ. Զոհրապի ո՞ր նորավեալից է տրված հատվածը:**

«Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծկած տուները կողոպտելով, ու հոժարությամբ ետ պիտի տար զողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար»:

- 1) «Զարուղոն»
- 2) «Ծիտին պարտքը»
- 3) «Այինկա»
- 4) «Փոստա՛լ»

**32**

**Ո՞ր բառն է բաց քողած:**

Վտարանդի, երկրում աղոտ,  
Լուսե՞ղ, քեզ եմ երազում,  
Եվ հնչում է, որպես աղոթք,  
.....քո լեզուն:

- 1) Արքայական
- 2) Հազարամյա
- 3) Բիբլիական
- 4) Վաղնջական

**33**

**Ո՞ր բառերում վերջածանց կա.**

1. օծյալ, 2. ծաղիկ, 3. ելուստ, 4. դանակ, 5. հրաշապատում, 6. քառակուսի, 7. առտնին, 8. խորաքնին:

**34**

**Ո՞ր տարրերակներում է նախադասության անդամի պաշտոնը սխալ նշված:**

Մի թխապամած օր, երբ ես և Հովհաննես Թումանյանը Լոռուց վերադառնում էինք Թիֆլիս, երկար սպասեցինք հայկական գնացքին, որը պիտի կազմվեր հենց այդտեղ՝ կայարանում, բայց այդ գործն ուշանում էր, և ոչ ոքի հայտնի չէր՝ երբ պատրաստ կլինի:

1. կայարանում – տեղի պարագա
2. երկար – որոշիչ
3. ոքը – ենթակա
4. պատրաստ – ուղիղ խնդիր
5. ոչ ոքի – հանգման խնդիր
6. հայտնի չէր – բաղադրյալ ստորոգյալ

**35**

**Ո՞ր նախադասություններում անորոշ դերքայ կա:**

1. Սեր դժվարն էլ ինքնիրեն է լինելու, ու քո հեշտն էլ մի պատճառ է հնարելու, որ չինի:
2. Նրանք գնում էին անհայտ մի ուղով՝ փրկվելու հույսը սրտներում պահած:
3. Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ովեր ու զառներ:
4. Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի:
5. Այդ մենք ենք զալու, որ ինը փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդություն:
6. Պետք էր այդ մասին անպայման հայտնել սպարապետին:

**36** **Ո՞ր բառերում հնչյունափոխություն կա.**

1. գահավիժել, 2. որդյակ, 3. հրավեր, 4. ընչաքաղ, 5. հանդիսավոր, 6. գեղծարար,
7. դեռափթիք, 8. ուխտադրուժ:

**37** **Ո՞ր տարրերակներում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված (*որված խոսքի մասով արտահայտված ենթակա չկա*):**

1. Ու եկողներն ել խորհուրդ չեն տալու Փնտրել անհնարն ու անկարելին: (*ածական*)
2. Տիրությունս անուշ է որպես Հեռավոր, հեռավոր կարկաչ: (*զոյսկան*)
3. Կածանները նրանց անծանոք են ու երկյուղալի. մանուկները չգիտեն ինչ ձորեր են մտնում: (*դերանուն*)
4. Գլխավոր հրապարակում կանգնածները ջահել տղաներ ու պարուիխներ էին: (*անդեմ բայ*)

**38** **Ո՞ր նախադասություններում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նավի առաջամասում գլխիկոր կանգնածը մտախոհ դիտում էր վճիռ ջրի մակերևույթը մարմարի նման անշարժ և մարմարի նման ողորկ:
2. Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
3. Բոլորին մեկ առ մեկ աչքի անցկացնելուց հետո հպարտ կեցվածքով վեր կացավ նստած տեղից ու նստենալով ձեռքով բարեւեց յուրաքանչյուրիս:
4. Լուսնիկա զիշերներին խարույկի մոտ երիտասարդը ձկնորսների հետ ունենալում էր նրանց սազի հոգեհմա ելևէջները ծովի անուշ ձայնը:
5. Ինչպիսի ցնցող տպավորություն բողեց մեզ երիտասարդ գրողներիս վրա նրա նոր գիրքը:

**39** **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

հանդիպակած, հափշտակել, անհողիողող, երկվորյակ, դիցուկ, կառկառուն, լայնափողք, գաղթագողի:

**40** **Տրված բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

անրիվ-անհամար, մարդ-մուրդ, առոք-վառոք, այսօր-վաղը, գրել-կարդալ, լեփի-լեցուն, լավ-վատ, նետ-աղեղ:

**41** **Տրված բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ.**

պատճեն, հրշեց, աշխատավարձ, ատամնաբույժ, հողատեր, մարսանենգ, հորաքույր, տոնածառ:

**42** **Տարրերակներից քանիսո՞ւմ է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

- **Դաժան բանտում եղբոր զարհուրելի նահատակությունը խելազարեցնում էր նրան, և հոգին ամենսին չէր ուզում ընդունել, որ եղբայրն այլևս չկա:**
- **Ով էր դա՝ ոչ ոք չէր կռահում, որովհետև դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան:**
- **Կրակը քրքջում էր մշակների միամիտ փորձերի վրա, և բոցերի լեզուները, քվում է, արձակում էին դիվային հոհողոցներ:**
- **Դու սրբություն չես ճանաչում, և որանից է, որ քո սուրբ հենց քո դեմ է ուղղվում:**

43

Նախադասության անդամներից քանիսի՝ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

Եթե շրջանցեհնը վարարած գետը կամ գնայինը մեծ ճանապարհով, որ հեռացնում էր մեր նպատակակետը, կկորցնեհնը շատ ժամանակ, ուստի գետի միջով անվարան գնացինը առաջ:

- շրջանցեհնը – ըղձական եղանակ
- շատ – չափի մակրայ
- հեռացնում էր – պատճառական բայ
- որ – ստորադասական շաղկապ
- վարարած – ածական
- առաջ – կապ, հետադրություն

44

Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:

հանգավորում, համեմատություն, մակդիր, շրջադասություն, չափազանցություն:

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդոտ, Թոքախտավոր ստեղների պես ոռյալի, Փոշուց կերած նկարների նման անթով, Որպես մեռած գեղեցկուհու մի հայելի՝

Հոգիս տիսրել է անբարբառ ու չգիտի՝ Ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում, Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի Չի՝ ամոքում նրա կարոտը անանուն:

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Սիսալ է, Զգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Անվանական անդեմ նախադասություններում բայ չի կարող լինել:
2. Թերի նախադասություններում ամբողջությամբ գեղշված ստորոգյալը չի կարող վերականգնվել:
3. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկը կարող է լինել միակազմ:
4. Թերի նախադասության մեջ ենթական և ստորոգյալը միաժամանակ չեն կարող գեղշվել:
5. Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են երկու տեսակի՝ անվանական և բայական:
6. Սիսակազմ նախադասությունները չունեն կիրառության նույն հաճախականությունը, ինչ երկկազմները:

## Բ մակարդակ

**46** Համարակալված բառերում բաց բողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:

Պապի շքախմբի անդամները զրունակում էին հե-ենական(1) հինավուր-(2) մայրաքաղաքում և դիտում շուրջողողոր: Ծովայի խլրտուքը ապշեցնում էր: Սիր-կան(3) երկարագույնը հագուստները խառնվում էին բյուզանդական ուկ-առ(4) պատմուճաններին: Կային զգ-շավոր(5) վաճառականներ, խոր-վիլակներ(6) հիշեցնող սևամոր-(7) գերիններ: Սի կին խ-քին(8) բարրառով ինչ-որ աղո-քներ(9) էր մրմնջում: Արաքները վաճառում էին ու-տեր(10) ու ձիեր:

- 1) 1-Ա, 2-Ե, 5-Ռ, 10-Դ
- 2) 3-ՅԱ, 6-ԱՒ, 7-Ք, 10-Ի
- 3) 2-Ե, 6-ԱՒ, 8-Ր, 9-Ք
- 4) 1-ԱՋ, 4-ԵՎ, 5-ՌՈՒ, 8-Ր

**47** Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի թ-ն ճիշտ տեղադրված:

- 1) հանգը(ը)նել, տ(ը)րտմել, ընկ(ը)րկել
- 2) դո(ը)նբաց, ս(ը)պանել, խ(ը)մբվել
- 3) կ(ը)նճռոտ, քն(ը)նել, խճ(ը)ճվել
- 4) կ(ը)րկնել, գտն(ը)վել, ձեռն(ը)տու

**48** Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:

- 1) սենեկապետ, երևութական, բնափայտ
- 2) օրինապահ, փափկասուն, ընչացք
- 3) դիտանցք, վերնասուն, մնջախաղ
- 4) միջանցք, երգչախումբ, դպրոց

**49** Ո՞ր տարրերակում բարի սխալ բացատրություն չկա:

- 1) խայտաճանուկ – վառ և բազմազան գույներով, երախայրիք – օգտակար խորհուրդ
- 2) դարակագմիկ – նոր դարաշրջան բացող, հանգրվան – հանգստանալու տեղ, կայան
- 3) աղորիք – հացահատիկ աղալու մեքենա, նյութել – որևէ դավանության հետևել
- 4) քիվ – ժայռի խոռոչ, կոչնակ – եկեղեցի հրավիրող զանգ

**50** Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) հրավեր, երաշտ, նաժիշտ
- 2) դատարկ, խնդիր, գողոն
- 3) պնակ, սնունդ, տրտում
- 4) ճանապարհ, ընկույզ, սնուտի

**51** Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված մեկ արմատից և երկու ածանցից:

- 1) վերաքննիչ, դժվարեն, բուրաստան, չխոսկան
- 2) վարկավորում, մակերեսային, համապարփակ, անարժեք
- 3) ամընթեռնելի, տարատեսակ, բեմադրիչ, համալսարան
- 4) տմարդի, ապավինում, փոխօգնություն, բաղդատական

**52**

Ո՞ր շարքի բառերից ոչ մեկի որևէ արմատի չի կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) **-ային** -առաջնեկ, խորհրդակցել, մազանոր
- 2) **-մունք** -փետրվար, անբաժանելի, ուսանող
- 3) **-ոն** -պարագլուխ, ծամկալ, վարձկան
- 4) **-ենի** -նշանող, ընձառյուծ, թզուկ

**53**

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ներքին հոլովման:

- 1) եղայր, գարուն, դեղատուն
- 2) հուշայուն, ցասում, գայլաշուն
- 3) ձյուն, բազմանկյուն, ավյուն
- 4) վանահայր, ուրախություն, դերանուն

**54**

Ո՞ր նախադասության մեջ մակրայ կա:

- 1) Գետնափորի թանձը խավարն ու գերեզմանային լուրջունը հիշեցնում էին, որ այդ ամենն արդեն անդարձ երազ է:
- 2) Նա մոտեցավ շարիսին, և ոտքերն սկսեցին շարժվել համաշափ ռիթմով:
- 3) Բարձրանալով քարե փոքրիկ սանդուղքներով՝ մտա մի ընդարձակ սենյակ՝ ցածր առաստաղով:
- 4) Զորի ճանապարհով՝ մեղվանոցի մոտով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:

**55**

Ո՞ր նախադասության բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):

- 1) Բողարք ջահել շուն էր. գայլից դեռ մի քիչ վախենում էր, այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից:
- 2) Ես կրունկներով խփեցի ձիու կողերին, մի անգամ էլ նա կանգնեց հետին ոտքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց:
- 3) Զին թռավ որթատունկերի և փոքր ծառերի վրայով և ինձ գետին գցելով՝ վազեց հեռու:
- 4) Զիերի բազմության մեջ քուռակն իր մորն էր փնտրում և վազվում էր ու կանչում՝ բարակ վրնջալով:

**56**

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:

- 1) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրաում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և ենթադրվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:
- 2) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տաճ ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
- 3) Ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:
- 4) Խառնվել է զիխում իին ու նորը, միտքը տկարացել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է սպասվում վաղը:

57

Ո՞ր շարքի բոլոր բառերն են շաղկապներ:

- 1) քանի դեռ, եթե, բայց, թեպետ
- 2) թե, որ, թեկուզ, արդյոք
- 3) իսկ, հենց, որովհետև, հանուն
- 4) թե չէ, կամ, գոնեն, քանի

58

Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ չկա:

- 1) Երբ նայում է, որ ափերին ես չկամ, Մոլորվում է Լորագետը ու գնում:
- 2) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:
- 3) Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր, Երբ որ ուժեղող չէին ներելու:
- 4) Ինչ եղել եմ, եղել, Սիայն շասեք, թե ես Ավելորդ եմ եղել:

59

Տրված նախադասություններից որի՞ դիմաց է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Ներկաների համար պարզ էր, որ կինը հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս: (*ուղիղ խնդիր*)
- 2) Զո՞նվերը ինձ այն կլինի, եթե կարդաս մեր դասականներին: (*ստորոգելի*)
- 3) Զորյանի կինը՝ տիկին Սաքենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թեև ինձ չէր ճանաչում: (*զիշման պարագա*)
- 4) Երիտասարդներից մի փոքր հեռու նստած էր ավանի փոստատան կառավարիչը, որ բարեղեմ, խելոք աչքերով և գորշավուն մորուքով մի մարդ էր: (*բացահայտիչ*)

60

Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Այն օրը, երբ Գևորգը վերադարձավ ճամփորդությունից, որոշեցին նրան ամուսնացնել:*  
Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալուն պես որոշեցին նրան ամուսնացնել:
- 2) *Հոր երազանքն այն է, որ որդին իր նման քանդակագործ դառնալը հոր երազանքն է:*  
Որդու՝ իր նման քանդակագործ դառնալը հոր երազանքն է:
- 3) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*  
Երևում էր հնձվորի գերանդու՝ հանդերի վրա ինչպես աղեղ տալը:
- 4) *Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որ ներքևից չէին երևում:*  
Գյուղի բնակիչները վախից կծկվել էին ներքևից չերևացող բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում:

61

Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը (*դերբայը իր բոլոր լրացումներով*) ճիշտ ընդգծված (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Արտառոց է ինձ համար երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի իսկ ներկայացումը **նրանից ստացված հազուսի հետ**:
- 2) **Երկար ճանապարհից հոգնած տարեց** ուղևորը գլուխը հենել էր գնացքի պատուհանին:
- 3) Նրա ճախողման պատճառը **ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելին** էր:
- 4) **Պատերազմից հետո մենք ձեռքներս փողոցի անցորդներին պարզած** կանգնել էինք եկեղեցու դրան մոտ:

**62**

Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

*Սարոյանը զրել է՝ ..... իր .... զրողմերից մեկի՝ Անտոն Չեխովի .... սկզբունքին.  
«Իրավացի է նա, ով անկեղծ .....»:*

(1. հոչակել, 2. սիրել, 3. եմ, 4. հետևել)

- 1) 4, 2, 1, 3
- 2) 2, 4, 1, 3
- 3) 4, 3, 2, 1
- 4) 2, 3, 4, 1

**63**

Հատվածներից ո՞րն է Հ. Սահյանի «Անտառում» բանաստեղծությունից:

- 1) Ծանր նստել է և ամեն մեկին  
Իրեն արժանի պատիվն է տալիս.  
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,  
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,  
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
- 2) Կախվել է ժայռը անդունի վրա  
Եվ դարեր այդպես կախված է մնում,  
Զրերի մեջ են ուորերը նրա,  
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
- 3) Արևոտ մի սար եմ հիշում՝  
Շակատին ձյունի պատարիկ,  
Սարն ի վար բարակ մի առո՛՝  
Շուրթերին հայրեն ու տաղիկ...
- 4) Փայտահատը հին երգն էր կրկնում  
Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին,  
Թեղին անտարբեր ականջ էր դնում  
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

**64**

Ո՞ր նախադասության մեջ փակագծերը չպահպանվում են (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հարեւան մի կին մի օր իր ծանոթներին հայտնեց թե Իվան բեյը ցնդածի պես է դարձել նա ինքնիրեն շարունակ ժապում է ձեռքերը մոտեցնում սառը վառարանին ու իրար շփում:
- 2) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անձանոր մարդ նրան նամակ հանձնեց:
- 3) Ի վերջո դժվար կյանքս ու խարված սերերս էին որ ինձ դարձրին այն ինչ կամ և համարձակվում եմ ասել ի դեպ սա ինքնազովություն չէ ես ինձ դուր եմ գալիս:
- 4) Տաքելի նշանավոր վանքում Հռվիան Որոտնեցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալած գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաքել կրթական խոշոր կենտրոն է դառնում:

**65**

**Ե. Զարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

*Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան -  
Ու լուսավոր առավոտները իմ հոգու,  
Ո՞վ դարձրեց- մի անկրակ իրիկնաժամ,  
Ու գորշ պարան, ու երկնուղեց փայտեր երկու:*

- 1) «Մահվան տեսիլ»
- 2) «Վահագն»
- 3) «Դանքեական առասպել»
- 4) «Անվերնագիր»

**66**

**Ո՞ր նախադասության մեջ միայն մեկ որոշիչ կա:**

- 1) Թոշուններն էլ էին զուգվել, և այնպես փայլում էին սարյակների սև փետուրները:
- 2) Արթնացող ամպի հառաջն առաջին Գալիս մտնում է ականջը նրա:
- 3) Երևան են ժամանել յոթանասուն խոշորագույն աստղաֆիզիկոսներ:
- 4) Մահախուճապ սերունդների Աչքն է դիպել լույս գագաթին Ու անցել:

**67**

**Ո՞ր նախադասություններում բայի սխալ ձև կամ բայաձևի սխալ գործածություն կա:**

1. Հենց այդ պահին՝ փողոցն անցնելուց, զգաց, որ զիսապտույտ ունի:
2. Երբ փորձում էի նրան հիշեցնել տված խոստումները, չլսելու էր տախս:
3. Անձայրածիր հեռուներում սկին տվող լեռների սուր կատարները ահարկու տպավորություն էին թողում:
4. Մթության մեջ խարիսափելով՝ փոքրիկներն առաջ էին շարժվում ու հանկարծակի իրար կպնելիս սարսափած ճշում էին ու կծկվում:

**68**

**Ո՞ր հատվածներում հանգման անուղղակի խնդիր կա:**

1. Է՞հ, ի՞նչ արած, բախտը խոռով  
Թող աշխարհում մեզ չհիշի,  
Միայն ապրենք մենք սիրելով,  
Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի:
2. Ինչպես ծերունին ձայնով պառաված  
Զայնակցում է Ժիր թռոնիկի երգին,  
Այնպես էլ ծերուկ անտառը կամաց՝  
Արձագանք տալիս ջրի աղմուկին:
3. Բայց հուշերիս մեջ նայում ինձ դարձյալ,  
Ժպտում են դարձյալ աչքերը քո ջինջ:
4. Ու քարշ եմ զալիս ու քարշ եմ զալիս,  
Անքուն ջրի պես դիպչում քարերին,  
Անշունչ քարին էլ երնեկ եմ տալիս:

## Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, զաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չեն բացատրել մերոյա գիտության զարգացման մակարդակով։ Երկրագնդում կան վայրեր, որտեղ փիգիկայի ինչ-ինչ օրենքներ պարզապես չեն գործում, օրինակ՝ որոշ վայրերում գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, որիշ տեղերում առարկաները, որոնք իրականում ուղիղ են կանգնած, ինչ-որ անկյան տակ գետնի վրա թեքված են երևում։ Այդպես է, օրինակ, մոլորակի ամենաստեղծվածային վայրերից մեկում Կալիֆոռնիայում գտնվող մի փորքիկ բնակավայրում, որտեղ առաջին անգամ բնակություն են հաստատել հնդկացիները։ Այստեղ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնում, թեև ըստ հարթաշավի՝ հիմքը կատարելապես ուղղված է լինում։ Ավելիմ՝ մարդիկ այստեղ իրենց իրական հասակով չեն երևում։ ոմանք՝ ավելի բարձրահասակ, մյուսներն ավելի կարճահասակ են թվում։

Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդպիսի անսովոր երևույթներ դիտվում են երկրագնդի տարբեր վայրերում, սակայն հարկ է նշել, որ տարածքները, որոնցում գործում են նման անոնականները, խիստ սակավարիվ են։

Այդ տարածքներն իրենց հետաքրքրությամբ գրավում են գրուաշրջիկների, ուստի և այդ՝ եկամտարերության առումով բարենապատ վայրերում հյուրատներ կառուցող ինժեներների ուշադրությունը։

1. Կալիֆոռնիայի մի բնակավայրում կան տներ, որոնք նույնիսկ վերակառուցումներից հետո էլ ուղիղ չեն կանգնում՝ հակառակ հարթաշավի ցույց տվածի։
2. Աշխարհի տարբեր վայրերում դիտվող անսովոր երևույթները հետաքրքրություն են առաջացնում գրուաշրջիկների և նրանց համար կացարաններ կառուցող ինժեներների համար։
3. Երկիր մոլորակի բոլոր այն վայրերում, որտեղ անոնակ երևույթներ են նկատվում, մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվում։
4. Երկրագնդի որոշ վայրերում դրսևորվում են այնպիսի անոնակ երևույթներ, որոնց պատճառը մերօրյա գիտությունը դեռևս չի կարողանում պարզել։
5. Հնդկացիները պարզել են, որ Կալիֆոռնիայում ֆիզիկայի մի քանի օրենքներ չեն գործում։

## Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը։

1. Հայերնենի ժխտական դերանուններն են՝ **ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի, ոչ միայն, ոչիմէ**։
2. **Այսքան, այդքան, այնքան** ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացու։
3. **Ես, դու, նա, ինքը** անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հոլովվում են գրյականից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ։
4. Հարաբերական դերանունները չեն դառնում նախադասության անդամ։
5. Անորոշ դերանուններից ոչ մեկը ենթակայի պաշտոն կատարել չի կարող։
6. **Ես ինքս, դու ինքդ, նա ինքը** կապակցությունների երկրորդ բաղադրիչները բացահայտիչներ են։